



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

2012թ. Տարբեր 7 - Ի թիվ 5/4

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՏԱՐՄԱՆ,
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ,
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել ՀՀ ֆինանսների նախարարության՝ զանապետական համակարգի կողմից
իրականացվող խնդիրների օրինական և արդյունավետ կատարման, լիցենզավորման
գործակալության աշխատանքների արդյունավետության, լիցենզավորման պայմանների և
պահանջների հսկողության տեսչության աշխատանքների արդյունավետության նկատմամբ
իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝
համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԲԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊԻ խորհրդի
2012թ. մարտի 7-ի թիվ 5/4 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՈՂՄԻՅԻ ՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՏԱՐՄԱՆ, ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի գործունեության տարեկան ծրագրի 5.8 կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 26/1 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գանձապետական համակարգի կողմից իարականացվող խնդիրների օրինական և արդյունավետ կատարման, լիցենզավորման գործակալության աշխատանքների արդյունավետության, լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության աշխատանքների արդյունավետության ուսումնասիրությունն է:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գանձապետական համակարգի կողմից իարականացվող խնդիրների օրինական և արդյունավետ կատարման, լիցենզավորման գործակալության աշխատանքների արդյունավետության, լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության աշխատանքների արդյունավետությանն ուղղված գործառնությունների նկատմամբ վերահսկողությունն է:

Վերահսկողության օբյեկտները՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գանձապետական համակարգ, լիցենզավորման գործակալություն, լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչություն:

Վերահսկողության ծավալը՝

Մուրհակների տրամադրման գործընթացը

ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման գործընթացը
Բյուջետային վարկերի տրամադրման գործընթացը
Պետական (գանձապետական) պարտատոմսերի թողարկման գործընթացը
Լիցենզավորման և հսկողական գործառնությունները:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 27.10.2011թ.-31.03.2012թ.

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2009թ.-ի հունվարի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 26-ը ներառյալ:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով, ինչպես նաև կիրառվել են ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Կիրառվել է ընտրանքային մեթոդի ոչ վիճակագրական եղանակ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման և ստուգման արդյունքում ստացված տվյալները:

Վերահսկողության արդյունքները՝

1. Մուրհակներ

Հայաստանի Հանրապետությունում տրամադրվել են՝

- դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակներ
- ՀՀ կառավարության որոշումների հիման վրա՝

ա) փոխանցելի անտոկոս մուրհակներ

բ) հասարակ մուրհակներ

գ) բյուջետային տարում ՀՀ կենտրոնական բանկին տրամադրված անտոկոս ցախհանջ հասարակ մուրհակ:

2009 թվականին թողարկվել է 22,299.41 հազ. դրամի 16 մուրհակներ, որոնցից 10-ը՝ փոխանցելի, 6-ը՝ հասարակ:

2009 թվականի բյուջետային տարվա ընթացքում փաստացի մարվել է 2,016,190.41 հազ. դրամի 31 մուրհակ, որից՝ 27-ը՝ փոխանցելի, 4-ը՝ հասարակ:

2010, 2011 թվականներին թողարկվել է 494,027,31 հազ. դրամի միայն փոխանցելի մուրհակներ, որից՝ 2010 թվականին թողարկվել է 20-ը, 2011 թվականին՝ 23-ը, իսկ մարվել 2010 թվականին՝ 35-ը, 2011 թվականին՝ 20-ը:

Վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1. ՀՀ կառավարության որոշումների հիման վրա տրամադրվող փոխանցելի և հասարակ մուրհակների տրամադրման գործընթացը կանոնակարգված չէ: Ներկայումս

կանոնակարգված է միայն դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրումը: Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 13 կետի, մեկ տարի ժամկետով փոխանցելի մուրհակ կարող է տրվել դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց, և որի տրամադրման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 7-ի թիվ 436 որոշմամբ:

2. Խախտվել է ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 7-ի թիվ 436 որոշմամբ հաստատված «Դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 6-րդ կետը, այսինքն՝ պարտատիրոջը մուրհակները չեն տրամադրվել կատարողական թերթիկն ստանալու օրվանից սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում: Օրինակ՝ 2009 թվականի ընթացքում, մարված դատական ակտերի հիման վրա, ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց տրամադրված տասը փոխանցելի մուրհակներից ութի դեպքում չի պահպանվել Կարգի 6-րդ կետը, 2010 թվականին քսանից՝ տասի և 2011 թվականին՝ քսանից՝ յոթի դեպքում: Նշված մուրհակների գծով փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ սահմանված 20 օրյա ժամկետի խախտումը պայմանավորված է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 7-ի թիվ 436 որոշմամբ հաստատված Կարգ 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ՀՀ ֆինանսների նախարարությանը ոչ լիարժեք ներկայացնելու հանգամանքով:

3. Համաձայն «Դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգի» 7-րդ կետի, մուրհակների մարման ժամկետը պետք է սահմանվի մինչև 360 օր, սակայն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20 թիվ 1384-Ա որոշմամբ 2008 թվականի դեկտեմբերի 2-ին «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ին տրամադրվել է 1,950.0 մլն դրամի փոխանցելի մուրհակներ՝ 2010 թվականի նոյեմբերի 19-ին մարման ժամկետով՝ Կարգով սահմանված շրջանառության ու մայման պայմաններով: Այսինքն, ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20 թիվ 1384-Ա որոշմամբ չի պահպանվել Կարգի 7-րդ կետում սահմանված դրույթը և մարման ժամկետ է սահմանվել 617 օր:

2. ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրեր (բյուջետային երաշխիքներ)

2009-2011 թվականների ընթացքում ՀՀ կառավարության կողմից վեց կազմակերպությունների տրամադրվել է 12,952.10 հազ. ԱՄՆ դոլարի ՀՀ պետական բյուջեի

երաշխավորագրեր (այսուհետ՝ բյուջետային երաշխավորագրեր): 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ տրամադրված բյուջետային երաշխավորագրերը հիմնականում մարվել են և 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ կառավարության կողմից տրված բյուջետային երաշխավորագրերից մարված չէ միայն «Թամարա Ֆրութ» ՓԲԸ-ին և «Մ. Գ. Հաուզինգ» ՍՊԸ-ին տրամադրված բյուջետային երաշխավորագրերը:

ՀՀ կառավարության 12.02.2009թ. N 159-Ա որոշման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության և «Թամարա Ֆրութ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է բյուջետային երաշխավորագրի տրման մասին 1(01)EP/2009 հաջորդական գրավի N1, N2 և շրջանառու միջոցների գրավի պայմանագրերը: Ընկերության հետ նշված պայմանագրերը կնքվելուց հետո 30.03.2009թ. տրամադրվել են ընդամենը 3,359.80 հազ. ԱՄՆ դոլար գումարի չափով N 1(01)/2009 և N 2(02)/2009 բյուջետային երաշխավորագրեր՝ մինչև 2013 թվականի օգոստոսի 30-ը մարման ժամկետով: Հետագայում, ՀՀ կառավարության կողմից տրամադրված բյուջետային երաշխավորագրերը փոխարինվել են նոր՝ 28.06.11թ. կազմված N 1(01)/2011 բյուջետային երաշխավորագրով 2,746.38 հազ. ԱՄՆ դոլար գումարի չափով և մարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2018 թվականի ապրիլի 15-ը:

«Մ. Գ. Հաուզինգ» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի թիվ 718-Ա որոշման հիման վրա 2009 թվականի հուլիսի 16-ին բյուջետային երաշխավորագիր է տրամադրվել 3.0 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ երեք տարի մարման ժամկետով: 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ինտեգրանկ ՓԲԸ-ն տրամադրված վարկի մարման նպատակով ընկերության նկատմամբ իրականացնում էր հավատարմագրային կառավարում:

ՀՀ ֆինանսների նախարարությունում բյուջետային երաշխավորագրերի տրամադրման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

1. Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունների կողմից պատասխանատու պետական կառավարման համապատասխան մարմնին ներկայացրած բյուջետային երաշխավորման հայտերի փաթեթներում բացակայում են ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգի 4-րդ կետի պահանջներին համապատասխան կազմվող փաստաթղթեր: Օրինակ՝ հայտատուի դիմումը, աուդիտորական կազմակերպության եզրակացությունը հայտատուի վճարունակության վերաբերյալ և այլն:

2. Հայտը հիմնավոր ճանաչելու դեպքում ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունները ՀՀ կառավարություն պետք է ներկայացնեն հայտատուի պարտատիրոջը բյուջետային երաշխավորագիր տրամադրելու վերաբերյալ առաջարկություն՝ համապատասխան հիմնավորումներով, սակայն «Մ. Գ. Հաուզինգ» ՍՊԸ-ին բյուջետային

երաշխավորագրի տրամադրման փաստաթղթերի փաթեթում այդ առաջարկությունը բացակայում է:

3. Բյուջետային վարկեր

2009-2011 թվականների ընթացքում ՀՀ կառավարությունը տրամադրել է 228,688,297.6 հազ. դրամ բյուջետային վարկեր:

2009 թվականին փաստացի տրամադրվել է 142,157,743.1 հազ. դրամի բյուջետային վարկ, որից՝ Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500.0 մլն ԱՄՆ դոլար վարկի գումարներից տրամադրվել է 97,603,099.0 հազ. դրամ:

2010 թվականին փաստացի տրամադրվել է 39,297,845.9 հազ. դրամի բյուջետային վարկ, որից՝ Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500.0 մլն ԱՄՆ դոլար վարկի գումարներից տրամադրվել է 5,831,241.5 հազ. դրամ:

2011 թվականին փաստացի տրամադրվել է 47,232,708.7 հազ. դրամի բյուջետային վարկ, որից՝ Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500.0 մլն ԱՄՆ դոլար վարկի գումարներից տրամադրվել է 11,654,852.9 հազ. դրամ:

Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500.0 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի պայմանագիրը ստորագրվել է 2009 թվականի մայիսի 20-ին, իսկ այդ գումարների հաշվին 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ տրամադրվել է 115,089,193.4 հազ. դրամի բյուջետային վարկեր:

4. ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսեր

Հայաստանի Հանրապետության ներքին պետական պարտքի աղբյուրներից են ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերը, որոնք 2009, 2010 և 2011 թվականներին ներքին պետական պարտքի մեջ տեսակարար կշռով կազմել են համապատասխանաբար՝ 93.9%, 96.0% և 97.1%:

ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի միջոցով կատարվում է դեֆիցիտի ֆինանսավորում, որը 2009 թվականին նախատեսվել է 25,000,000.0 հազ. դրամ, սակայն իրականացվել է 45,434,860.8 հազ. դրամով՝ կատարողականը կազմելով 182%, 2010 և 2011 թվականներին նախատեսվել է 30,000,000.0 հազ. դրամ և այս երկու տարվա կատարողականները կազմել են 101%: 2009 և 2010 թվականներին պետական պարտատոմսերի հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումը իրականացվել է և կարճաժամկետ, և միջին ու երկարաժամկետ պարտատոմսերի հաշվին, իսկ 2011 թվականին՝ հիմնականում միջին ու երկարաժամկետ պարտատոմսերի հաշվին: Կարճաժամկետ պարտատոմսերի

հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումը եղել է բացասական նշանով 17,167,571.74 հազ. դրամ, որը վկայում է տարվա ընթացքում ավելի շատ միջին ու երկարաժամկետ պարտքի ներգրավման մասին:

2009 թվականին ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի ընդհանուր տեղաբաշխման ծավալը կազմել է 112,116,780.0 հազ. դրամ, մարումը՝ 62,056,541.09 հազ. դրամ, սպասարկումը՝ 8,315,120.26 հազ. դրամ: 2010 թվականին՝ տեղաբաշխումը կազմել է 115,295,069.0 հազ. դրամ, մարումը՝ 79,043,498.10 հազ. դրամ, սպասարկումը՝ 15,480,473.96 հազ. դրամ: 2011 թվականին՝ տեղաբաշխումը կազմել է 139,222,024.0 հազ. դրամ, մարումը՝ 98,417,170.67 հազ. դրամ, սպասարկումը՝ 20,419,329.35 հազ. դրամ:

ՀՀ պետական (գանձապետական) խնայողական արժեկտրոնային պարտատոմսերը (այսուհետ ԽՊ) միայն ֆիզիկական անձանց վաճառվող պարտատոմսեր են, որոնց վաճառքը իրականացվում է բացառապես գանձապետական պահառուի կողմից՝ ազատ վաճառքի միջոցով: ԽՊ-ի թողարկման ծավալը 2009 և 2010 թվականներին կազմել է 1,500,000.0 հազ. դրամ, 2011 թվականին՝ 1,700,000.0 հազ. դրամ, իսկ տեղաբաշխվել է 2009, 2010 և 2011 թվականներին համապատասխանաբար՝ 270,845.0 հազ. դրամ, 517,415 հազ. դրամ և 583,924 հազ. դրամ, իսկ մարվել են՝ 2009 թվականին 151,376.0 հազ. դրամի չափով, 2010 թվականին՝ 99,982.0 հազ. դրամի, իսկ 2011 թվականին՝ 224,811.0 հազ. դրամի:

ՀՀ պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերը (այսուհետ ՊԿՊ) 2011 թվականին կազմում են ներքին պետական պարտքի 15.2%-ը: 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող ՊԿՊ-ների ծավալը անվանական արժեքով կազմում է 32,951,000.0 հազ. դրամ:

2009 թվականին թողարկված ՊԿՊ-ների տեղաբաշխման ծավալը ամբողջ պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալի մեջ կազմում է 51.5%, 2010 թվականին՝ 53.8% իսկ 2011 թվականին՝ 39.2%:

2009 թվականին իրականացվել է 44,626,891.09 հազ. դրամի ՊԿՊ-ների մարում, 2010 թվականին՝ 48,155,311.10 հազ. դրամի, իսկ 2011 թվականին՝ 69,296,005.67 հազ. դրամի, իսկ ՊԿՊ-ների հետգնում այդ երեք տարիների ընթացքում չի իրականացվել:

2008 թվականից ՀՀ ֆինանսների նախարարությունը սկսել է թողարկել պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային ուղենշային պարտատոմսեր (այսուհետ ՄԺՊ և ԵՊ): Թողարկվող պարտատոմսերը համարվում են ուղենշային, եթե դրա մասին նշված է թողարկման մասին հրամանում և գլոբալ հավաստագրում:

Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1580-Ն որոշմամբ հաստատված ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանների, նույն թողարկման ժամկետայնությամբ նոր ուղենշային պարտատոմսերի թողարկման դեպքում նախկինում թողարկածը դադարում է ուղենշային լինելուց: Սակայն, վերոնշյալ պայմաններում նշված չէ, որ եթե պարտատոմսը դադարում է ուղենշային լինելուց, ապա այն այլևս չի կարող տեղաբաշխվել: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հաջորդ նույն ժամկետայնությամբ պարտատոմսի թողարկումից սկսած նախորդ պարտատոմսը դադարում է տեղաբաշխվելուց, ինչը հնարավոր է դարձնում նույն ժամկետայնությամբ պարտատոմսի արժեկտրոնային եկամտի փոփոխման:

2009 թվականին ՄԺՊ և ԵՊ-երը ամբողջ պետական (գանձապետական) պարտատոմսերի տեղաբաշխման ծավալի մեջ կազմում են 48.3%, 2010 թվականին՝ 45.8%, 2011 թվականին՝ 60.4%:

2009 թվական ՄԺՊ և ԵՊ-ի տեղաբաշխման ծավալը կազմել է 54,138,450.0 հազ. դրամ, մարումը՝ 17,091,361.0 հազ. դրամ, արժեկտրոնի սպասարկումը՝ 6,505,792.0 հազ. դրամ: 2010 թվականին տեղաբաշխումը կազմել է 52,773.450.0 հազ. դրամ, մարումը՝ 30,731,242.0 հազ. դրամ, սպասարկումը՝ 11,607,687.8 հազ. դրամ, իսկ 2011 թվականին՝ տեղաբաշխումը կազմել է 84,069,100.0 հազ. դրամ, մարումը՝ 28,771,227.0 հազ. դրամ, սպասարկումը՝ 16,564,878.2 հազ. դրամ: Նշենք, որ 2008 թվականից մինչև 2011 թվականը ուղենշային պարտատոմսերի մարում իրականացվել է միայն մեկ անգամ, 2011 թվականի փետրվարի 5-ին 6,872,986.0 հազ. դրամի չափով՝ մարվել է 2008 թվականին թողարկված 3 տարանոց պարտատոմս:

Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1580-Ն որոշման, թողարկողն իր կողմից սահմանված և հրապարակված պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների ընտրության չափանիշների հիման վրա ընտրում է գործակալներ և դիլերներ: Սակայն, մինչև հիմա դեռ հաստատված չեն գործակալների և դիլերների ընտրության չափանիշները:

2011 թվականին Հայաստանի Հանրապետությունում կան յոթ գործակալ բանկեր, որոնք թողարկողի հետ կնքել են պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր: Պարտատոմսերով գործարքների իրականացման ժամանակ գործակալը գործում է իր անունից՝ իր հաշվին կամ իր անունից՝ ներդրողի հաշվին՝ նրա հանձնարարությամբ:

ՀՀ պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի շուկայում գործում են 21 դիլերներ (բոլոր առևտրային բանկերը, բացի Պրո կրեդիտ բանկից, և Տոնտոն ՍՊԸ միակ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունը, ովքեր իրավունք ունեն իրենց անունից՝ իրենց հաշվին, կամ իրենց անունից՝ ներդրողի հանձնարարությամբ, ներդրողի հաշվին, մրցակցային և ոչ մրցակցային առաջարկություններով մասնակցելու պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդին: Միջին ժամկետայնության և երկարաժամկետ պարտատոմսերի շուկայում դիլերն իրավունք ունի ներկայացնել միայն մրցակցային առաջարկություններ, սակայն այս շուկայում դիլերներ ընտրված չեն:

Լիցենզավորման և հսկողական գործառույթներ

ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ և ՀՀ ֆինանսների նախարարի 2008 թվականի օգոստոսի 6-ի թիվ 713-Ն հրամանով հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչության կանոնադրությունը, համաձայն որի լիցենզավորման վարչությունը կազմված է եղել խաղային գործի կարգավորման և աուդիտորական գործունեության, արժույթային կարգավորման և պարզ ընթացակարգով լիցենզավորման և վերահսկողության բաժիններից:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 268-Ն որոշմամբ ստեղծվել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն) ու լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն):

ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 19-ի թիվ 1146-Ն որոշմամբ հաստատվել են Գործակալության և Տեսչության կանոնադրությունները:

Գործակալության նպատակներն ու խնդիրներն են՝ խաղատների, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման, աուդիտորական գործունեության, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման, ինչպես նաև պարզ ընթացակարգով լիցենզիաների տրամադրումը:

Տեսչության նպատակներն ու խնդիրներն են՝ շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպման գործունեություններ իրականացնող լիցենզավորված անձանց կողմից «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների, ինչպես նաև համապատասխան բնագավառը կարգավորող նորմատիվ այլ իրավական ակտերի պայմանների ու պահանջների նկատմամբ հսկողությունը:

5. Լիցենզավորման գործարարությունների իրականացման վերաբերյալ

«Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով վերը նշված օրենքի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջները, ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի թիվ 1164-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ-ում շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը (այսուհետ՝ Կարգ): Նշված Կարգի համաձայն, հայտատուն լիցենզիա ստանալու համար լիազոր մարմնին պետք է ներկայացնի հայտ, և ի թիվս այլ փաստաթղթերի պետք է ներկայացնի նաև շահումով խաղերի մասին տվյալներ (ձև N 4)՝ խաղասեղանների և խաղային սարքավորումների ծագման սերտեֆիկատի համարը, տեսակները, մոդելը, ծածկագիրը և սերիալական համարը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2009-ից մինչև 2011թ. նոյեմբերի 11-ը տրվել է շահումով խաղերի 48 և խաղատների 14 լիցենզիաներ: Ստուգման ընթացքում պարզվեց, որ 2009թ-ին տրվել է 30 լիցենզիա, որից 25-ում թերի են լրացված ձև 4-ի տվյալները՝ 102 խաղային սարքավորումների սերիալական համարները, 273 խաղային սարքավորումների մոդելները, 139 խաղային սարքավորումների տեսակները, 36 խաղային սարքավորումների ծածկագրերը, 34 խաղասեղանների մոդելները, 37 խաղասեղանների սերիալական համարները, 6 խաղասեղանների ծածկագրերը:

2010թ-ին տրվել է 22 լիցենզիա, որից 13-ում թերի են լրացված ձև 4-ի տվյալները՝ 42 խաղային սարքավորումների սերիալական համարները, 66 խաղային սարքավորումների մոդելները, 121 խաղային սարքավորումների տեսակները, 15 խաղասեղանների մոդելները, 15 խաղասեղանների սերիալական համարները, 15 խաղասեղանների ծածկագրերը:

2011թ-ին տրվել է 10 լիցենզիա, որից 8-ում թերի են լրացված ձև 4-ի տվյալները՝ 20 խաղային սարքավորումների սերիալական համարները, 47 խաղային սարքավորումների մոդելները, 71 խաղային սարքավորումների տեսակները, 4 խաղային սարքավորումների ծածկագրերը:

Նույն Կարգի համաձայն, եթե կան շահագործման համար նախատեսված այնպիսի մեքենայացված խաղ կամ խաղեր, որոնց վրա բացակայում է սերիալական համարը, ապա լիազոր մարմնի տվյալ ոլորտի կարգավորմամբ զբաղվող ստորաբաժանման աշխատողի կողմից այդ մեքենայացված խաղի վրա փակցվում է պիտակ, որտեղ նշվում է հերթական անհատական համարը, և այն ստորագրվում է այդ աշխատողի կողմից: Դրանից հետո տվյալ մեքենայացված խաղի ծագման սերտեֆիկատի հետմամասում նշվում է այդ մեքենայացված խաղին տրված հերթական անհատական համարը, որի դիմաց ստորագրում են լիազոր մարմնի

տվյալ ոլորտի կարգավորմամբ զբաղվող ստորաբաժանման աշխատողը, կազմակերպության տնօրենը և կնքում այդ կազմակերպության կնիքով:

Այսպիսով, շահումով խաղերի և խաղատների գործունեության լիցենզավորումը լիազոր մարմնի կողմից հիմնականում իրականացվում է ՀՀ կառավարության 2004թ. հուլիսի 29-ի թիվ 1164-Ն որոշմամբ հաստատված լիցենզավորման կարգի խախտմամբ:

6. Խաղատների և շահումով խաղերի ռիսկերի ապահովման վերաբերյալ

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի միջոցով ստուգում իրականացնող մարմինը ստուգումները նպատակաուղղում է դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են: Ռիսկը տնտեսվարող սուբյեկտի գործունեության արդյունքում պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքային շահերին վնաս հասցնելու հավանականությունն է: Նշվածը ամրագրվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում՝ 23.06.2011 թվականին կատարված փոփոխության արդյունքում:

Վերահսկողության ընթացքում պարզվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողություն իրականացնող ստորաբաժանումը (այսուհետ՝ Ստորաբաժանում) 2009-2011թթ. կանոնադրական խնդիրների իրականացման ընթացքում ստուգման ենթակա օբյեկտների ընտրության ժամանակ ռիսկայնությունը որոշող չափանիշներ չի կիրառել՝ դրանք հաստատված չլինելու պատճառով:

«Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, եթե կազմակերպիչը խախտել է օրենքի պահանջը՝ տուգանքը որպես պատասխանատվության միջոց, կիրառվում է խախտման յուրաքանչյուր դեպքի համար: Ստորաբաժանումն իր գործունեությունը իրականացնելիս կիրառել է տարբերակված մոտեցում, այն է՝ 2009 և 2010թթ. ընթացքում ստուգումներ իրականացնելիս նմանատիպ խախտումները դիտել է որպես մեկ դեպք, կիրառելով մեկ դեպքի համար սահմանված տուգանքի չափ, իսկ 2011թ.-ին՝ նմանատիպ խախտման յուրաքանչյուր դեպք դիտել է որպես առանձին խախտում՝ կիրառելով համապատասխան տուգանքի չափ՝ յուրաքանչյուր դեպքի համար: ՀՀ ֆինանսների նախարարի 20.06.2011 թվականի թիվ 377-Ա հրամանի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների կողմից «ՈՒմառ» ՍՊ ընկերությունում 22.06.2011 թվականին ստուգվել է շահումով խաղի կազմակերպման թիվ ՇԽ-218 լիցենզիայի պահանջների կատարումը, որի արդյունում պարզվել է, որ ընկերության կողմից շահագործվող թվով 4 ավտոմատների միավորի գինը կազմում էր 2 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանել ՀՀ ֆինանսների նախարարության հետ 23.04.2010 թվականին համաձայնեցված կանոնակարգում

նշված շահագործվող ավտոմատների միավորի գներին: Փաստորեն ընկերությունը խախտել է «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «Ժ» կետի պահանջը, որի համար որպես պատասխանատվության միջոց կիրառվել է «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «Է» կետով նախատեսված տուգանքը՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար 500.0 հազ. դրամ: Կազմված ակտի համաձայն, ընկերության կողմից խախտման 4 դեպքի համար արձանագրվել է 2,000.0 հազ. դրամ տուգանք, որից 500.0 հազ. դրամը 07.07.2011 թվականին ընկերությունը վճարել է, դա գնահատելով կանոնակարգի խախտման մեկ դեպք: Ուշագրավ է, որ «Ումառ» ՍՊ ընկերությունը դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է վերացնել ՀՀ ֆինանսների նախարարության ստուգման արդյունքում 2011 թվականի հունիսի 22-ին կազմված թիվ 2011-ՇԽ-002 ակտը՝ խախտման երեք դեպք արձանագրելու մասով: ՀՀ վարչական դատարանի 2012թ. փետրվարի 2-ի թիվ ՎԳ/3299/05/11 վճռով «Ումառ» ՍՊ ընկերության հայցը մերժվել է և ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության վճռվել է բռնագանձել 1,500.0 հազ. ՀՀ դրամ՝ որպես ՀՀ ֆինանսների նախարարի 28.06.2011թվականի թիվ 417-Ա հրամանով ստուգման արդյունքում առաջադրված տուգանքի չվճարված մասի գումար:

Վերահսկողության ընթացքում պարզվեց նաև, որ որոշ դեպքերում ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողություն իրականացնող ստորաբաժանումը չի իրականացրել համապատասխան փաստաթղթային ստուգում, այն է կազմակերպությունների կողմից ներկայացված ելակետային տվյալները չեն համադրվել հաստատված կանոնակարգի տվյալներին: Այսպես.

- «Ինքեր-Սլոթ» ՓԲԸ-ի (խաղատուն Օրակուլ) 2009թ.-ի դեկտեմբեր ամսին ներկայացված ելակետային տվյալների համաձայն գործունեությունը իրականացրել է 64 խաղային ավտոմատներով և 10 խաղասեղանով, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության հետ 07.09.09թ. համաձայնեցված կանոնակարգով ընկերությունը նշված ժամանակաշրջանում իրավունք ուներ շահագործել թվով 1 խաղային ավտոմատ և 1 խաղասեղան, այսինքն խաղատունը թվով 63 հատ խաղային ավտոմատ և 9 խաղասեղան ավելի է օգտագործել:

- «Տեմպ-Սեթ» ՍՊԸ-ի (խաղատուն Փարիզյան) կողմից 03.02.2011թ. ներկայացված ելակետային տվյալների համաձայն, խաղատանը շահագործվել է թվով 10 խաղասեղան, իսկ 01.10.2010թ. հաստատված կանոնակարգով իրավունք ուներ շահագործել՝ 7-ը: Խաղատունը 2011թ. փետրվար ամսին շահագործել է կանոնակարգով թույլատրվածից ավելի 3 խաղասեղան:

Հարկ է նշել, որ նախքան «Տեմպ-Սէք» ՍՊԸ-ի լիցենզիա ստանալը նույն (Փարիզյան) խաղատունը գործել է «Գուդվին Սէք» ՍՊԸ-ին 23.10.2009թ.-ի տրված ԽՏ-052 լիցենզիայով, որի տնօրենը եղել է Ռ.Զավյալովը: 30.09.2010թ.-ի ՀՀ ֆինանսների նախարարի 638-Ա հրամանով տրված ԽՏ-052 խաղատան կազմակերպման լիցենզիայի ուժը կորցրած է ճանաչել երկու հիմքով: «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1 մասի «ե» և «զ» կետերով, այսինքն պետության նկատմամբ ունեցած ժամկետանց պարտավորությունների և իր դիմումի համաձայն: Արդեն 01.10.2010թ.-ին, մի օրվա տարբերությամբ, նույն Փարիզյան խաղատան համար «Տեմպ Սէք» ՍՊԸ-ին տրվել է ԽՏ-058 գործունեության լիցենզիան, որի հիմանադիրն է նախկին «Գուդվին Սէք» ՍՊԸ-ի տնօրեն Ռ.Զավյալովը: Ամբողջ գույքը անվարձահատույց օգտագործման իրավունքով տրվել է «Տեմպ Սէք» ՍՊԸ-ին:

7. Առանց լիցենզիայի գործունեության իրականացման վերաբերյալ

Հիմք ընդունելով «ՌԻմառ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2010թ.-ի մարտի 26-ին ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Լիազոր մարմին) ներկայացրած գրությունը, Լիազոր մարմինը 2010թ.-ի ապրիլի 13-ի թիվ 246-Ա հրամանով ուժը կորցրած է ճանաչել Ընկերությանը 2008թ.-ի ապրիլի 11-ին տրամադրած ՇԽ-146 լիցենզիան, համաձայն որի՝ Ընկերությունը շահումով խաղերի գործունեությամբ է զբաղվել ՀՀ կոտայքի մարզի Պոռշյան գյուղի Գ.Չառչի 1 փողոցի թիվ 12 հասցեում: Օրենքով սահմանված կարգով, 2010թ.-ի ապրիլի 14-ի թիվ 15.1/2084-10 գրությամբ Լիազոր մարմինը, Ընկերությանը տրամադրած ՇԽ-146 լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու փաստի վերաբերյալ տեղեկացրել է ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանումներում իրականացրած վերահսկողության ընթացքում պարզվեց, որ 2010թ.-ի մարտի 29-ին և հունիսի 22-ին Ընկերության կողմից Արաբկիր-1 հարկային տեսչությանը ներկայացրած և վերջինիս կողմից գրանցված շահումով խաղային ավտոմատների շահագործման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների մասին թվով երկու հայտարարությունների համաձայն, 2010թ.-ի ապրիլից մինչև 2010 թ. դեկտեմբերը (ներառյալ 9 ամիս) ծավալել է գործունեություն և շահագործել ամսական 16 խաղային ավտոմատ: Հարկ է նշել, որ նշված հայտարարություններում գործունեության իրականացման վայրի հասցեն, լիցենզիայի համարը և լիցենզիայի տրման ամսաթիվը նույնությամբ համընկնում են Ընկերության կողմից 2008թ.-ի ապրիլի 11-ին Լիազոր մարմնից ստացած ՇԽ-146 լիցենզիայում նշված տվյալներին: Ի դեպ, հարկային մարմնից ուղարկված ելակետային

տվյալների մասին վերը նշված երկու հայտարարությունների ստացումից հետո, Լիազոր մարմինը պարտավոր էր ահազանգել հարկային մարմնին, ինչը տեղի չի ունեցել: Փաստացի ստացվում է, որ 2010թ.-ի 9 ամիսներին (ապրիլ-դեկտեմբեր) Ընկերությունը առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ է զբաղվել, ինչը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի հոդված 46-ի կետ 1-ի համաձայն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով (5,000.0 հազ. դրամ) վնասի հատուցում: Ավելին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի համաձայն, առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն) գանձվում է տուգանք այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամուտի) 50 տոկոսի չափով:

8. Գովազդային վիճակախաղերի կազմակերպման վերաբերյալ

Գովազդային վիճակախաղերի կազմակերպման շահումային ֆոնդի առավելագույն սահմանաչափը չի կարող գերազանցել տվյալ ապրանքի կամ ծառայության նախորդ տարվա իրացումից ստացված հասույթի ութ տոկոսը և պետք է ձևավորվի նախորդ տարվա գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթի հաշվին: «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հեղվածի համաձայն, եթե շահումային ֆոնդը գերազանցում է նախորդ տարվա իրացումից ստացված հասույթի ութ տոկոսը, ապա տվյալ գործունեությունը դիտվում է որպես վիճակախաղի կազմակերպման գործունեություն, որի համար գործող օրենսդրությամբ սահմանված է տարեկան 100,000.0 հազ. դրամ պետական տուրք:

Վերահսկողության արդյունքում պարզվեց, որ օդանավակայան և Աշտարակ տանող մայրուղիների վրա «Գեկասե» ՍՊԸ-ի (Գոլթեն պալաս խաղատուն) կողմից տեղադրված գովազդային վահանակներով շահումային ֆոնդը կազմում է ամսական շուրջ 40,000.0 հազ. դրամ, այն դեպքում, երբ կազմակերպության 2010թ.-ի ծառայությունների մատուցումից հասույթը, ըստ հարկային մարմնին ներկայացրած հաշվետվության, կազմել է 195,500.0 հազ. դրամ, որի ութ տոկոսը կազմում է 15,600.0 հազ. դրամ: Նշվածից հետևում է, որ խախտվում է «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի պահանջը և յուրաքանչյուր դեպքով պետական բյուջեն չի համալրվում 100,000.0 հազ. դրամ պետական տուրքով: Լիցենզավորվող գործունեության ապօրինի իրականացումը որպես հետևանք պետք է առաջացնի մասնատուգանք իրացման շրջանառության 50%-ի չափով:

9. Աուդիտորական ծառայություններ իրականացնող լիցենզավորված անձանց կողմից իրականացված աուդիտի հետևանքով հնարավոր ռիսկերի ապահովագրման վերաբերյալ

Աուդիտորական ծառայություններ իրականացնող լիցենզավորված անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք):

Ներկայումս մի շարք օրենքներով տնտեսվարող սուբյեկտներից պահանջվում է իրականացնել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտ: Մասնավորապես, համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի, «Շահումով խոտերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի (10-րդ հոդված), խոշոր տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են օրենքով սահմանված ժամկետներում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին:

Փաստորեն, Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն, աուդիտորական ծառայությունների դիմաց վճարի չափը, վճարման կարգը և ձևը որոշվում են կողմերի միջև կնքված պայմանագրով: Իրականում ստացվում է, որ պատվիրատուն վճարում է աուդիտորին մատուցած ծառայությունների դիմաց, սակայն աուդիտորը հետագայում չի կրում իր կողմից պատվիրատուին մատուցած ծառայության արդյունքում հնարավոր ռիսկերը: Ներկայումս գործող օրենսդրության համաձայն, եթե առկա են բավարար հիմքեր աուդիտորական կազմակերպության կողմից իրականացված աուդիտի եզրակացությունը ոչ հավաստի համարելու համար, ապա այդ դեպքում տվյալ աուդիտորական կազմակերպության լիցենզիան և աուդիտի իրականացրած աուդիտորի որակավորման վկայականը ճանաչում են ուժը կորցրած, սակայն մատուցած ծառայության արդյունքում պատվիրատուին պատճառված վնասները չեն հատուցվում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում աուդիտորական ծառայություններ իրականացնող անձանց նկատմամբ կիրառվում են Օրենքի 27-րդ հոդվածով (լիցենզիայի գործողության կասեցում), 28-րդ հոդվածով (լիցենզիայի գործողության դադարեցում) և 31.2 հոդվածով (նախազգուշացում և խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարական), 31.3 հոդվածով (տուգանք) սահմանված պատասխանատվության միջոցները:

Ստուգմամբ պարզվեց, որ 2008-2010թթ. խաղատնային գործունեություն իրականացրած տնտեսվարող սուբյեկտների տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կազմակերպությունների բոլոր (թվով 243) եզրակացությունները դրական են:

Դրական եզրակացություն ստացած կազմակերպություններից 5-ից 3-ը («Եվրոսերվիս», «Հայկ Մոնչյան» և «ԷՍ ՍԻ ՏԵԶՍ» ՍՊ ընկերություններ) դատարանի վճիռներով սնանկ են ճանաչվել, իսկ 2-ի («Վինգրեյ» և «Սէտա» ՍՊ ընկերություններ) վերաբերյալ դատարանի որոշմամբ դիմումը ընդունվել է վարույթ: Պարզվեց նաև, որ շահումով խաղերի և խաղատնային գործունեության իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված անուղիտի արդյունքները չեն արտացոլում այդ բնագավառում առկա ռիսկերը: Անուղիտի առանցքը պետք է կազմեին էական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված ընդհանուր մեծության նվազագույն չափի՝ 86%-ի ապահովման, հասույթի իրական ծավալների գնահատման, կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի արժանահավատության հարցերը: Մինչդեռ, նշված հարցերը փորս են մնացել ուշադրության չբջանակներից:

Եզրակացություն

1. Մուրհակների տրամադրումը իրականացվում է «Դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգին» անհամապատասխան:
2. Բացակայում է ՀՀ կառավարության կողմից առանձին որոշումներով տրամադրվող հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրման կարգը:
3. ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգում բացակայում է երաշխավորագրերի ժամկետի երակարածգման դրույթը, պայմանները:
4. Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1580-Ն որոշմամբ հաստատված ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանների, նույն թողարկման ժամկետայնությամբ նոր ուղենշային պարտատոմսերի թողարկման դեպքում նախկինում թողարկածը դադարում է ուղենշային լինելուց: Սակայն, վերոնշյալ պայմաններում նշված չէ, որ եթե պարտատոմսը դադարում է ուղենշային լինելուց, ապա այն այլևս չի կարող տեղաբաշխվել: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հաջորդ նույն ժամկետայնությամբ պարտատոմսի թողարկումից սկսած նախորդ պարտատոմսը դադարում է տեղաբաշխվելուց, ինչը հնարավոր է դարձնում նույն ժամկետայնությամբ պարտատոմսի արժեկտրոնային եկամտի փոփոխման:
5. Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1580 – Ն որոշման, թողարկողն իր կողմից սահմանված և հրապարակված պարտատոմսերի

առաջնային շուկայի մասնակիցների ընտրության չափանիշների հիման վրա ընտրում է գործակալներ և դիլերներ: Սակայն, մինչև հիմա դեռ հաստատված չեն գործակալների և դիլերների ընտրության չափանիշները:

6.1 Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, գրեթե բոլոր երկրներում խաղային սարքավորումների ծրագրերը սերտեֆիկացվում և կոդավորվում են, իսկ ՀՀ-ում խաղատների և շահումով խաղերի կազմակերպիչների կողմից շահագործվում են խաղային սարքավորումներ, որոնց ծրագրային ապահովումը չի ենթարկվում սերտեֆիկացման: Նման պայմաններում, առանց խաղասեղանների և խաղային սարքավորումների վերաբերյալ ամբողջական տվյալների, լիցենզիայի տրամադյումը պետության և ֆիզիկական անձանց գույքային շահերին վնաս հասցնելը ավելի հավանական և անխուսափելի է դարձնում:

6.2 Շահումով խաղերի և խաղատների գործունեության լիցենզավորումը լիազոր մարմնի կողմից հիմնականում իրականացվում է ՀՀ կառավարության 2004թ. հուլիսի 29-ի թիվ 1164-Ն որոշմամբ հաստատված լիցենզավորման կարգի խախտմամբ:

7.1 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողություն իրականացնող ստորաբաժանումը 2009-2011թթ. կանոնադրական խնդիրների իրականացման ընթացքում ստուգման ենթակա օբյեկտների ընտրության ժամանակ ռիսկայնությունը որոշող չափանիշներ չի կիրառել՝ դրանք հաստատված չլինելու պատճառով:

7.2 Ստորաբաժանումը իր գործունեությունը իրականացնելիս կիրառել է տարբերակված մոտեցում, այն է՝ 2009 և 2010թթ. ընթացքում ստուգումներ իրականացնելիս մնանատիպ խախտումները դիտել է որպես մեկ դեպք, կիրառելով մեկ դեպքի համար սահմանված տուգանքի չափ, իսկ 2011թ.-ին՝ մնանատիպ խախտման յուրաքանչյուր դեպք դիտել է որպես առանձին խախտում՝ կիրառելով համապատասխան տուգանքի չափ՝ յուրաքանչյուր դեպքի համար:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողություն իրականացնող ստորաբաժանումը չի իրականացրել համապատասխան փաստաթղթային ստուգում, այն է՝ կազմակերպությունների կողմից ներկայացված ելակետային տվյալները չեն համադրվել հաստատված կանոնակարգերի տվյալներին:

8. Շահումով խաղերի և խաղատնային գործունեության կազմակերպիչների կողմից իրականացված գովազդային վիճակախաղերը որևէ իրավասու մարմնի ուշադրությանը չի արժանանում, իսկ հարկային մարմնի կողմից չի վերահսկվում: Նշվածի արդյունքում,

պետական բյուջեն յուրաքանչյուր դեպքով չի համալրվում 100,000.0 հազ. դրամ պետական տուրքով, ինչպես նաև լիցենզավորվող գործունեության ապօրինի իրականացումը որպես հետևանք պետք է առաջացնի նաև տուգանք իրացման շրջանառության 50%-ի չափով:

9. 2010թ.-ի 9 ամիսներին (ապրիլ-դեկտեմբեր) «ՈՒմառ» ՍՊ ընկերությունը առանց լիցենզիայի զբաղվել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ, ինչն առաջացնում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով (5,000.0 հազ. դրամ) վնասի հատուցում: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն) գանձվում է տուգանք այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամուտի) 50 տոկոսի չափով:

10. 2008-2010թթ. խալատնային գործունեություն իրականացրած տնտեսվարող սուբյեկտների տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կազմակերպությունների բոլոր (թվով 243) եզրակացությունները դրական են և կրում են ձևական բնույթ:

Կարճ ժամանկ անց որոշ տնտեսվարողներ, պետության հանդեպ ունեցած պարտավորությունների հիմքով, դատարանի վճիռներով սնանկ են ճանաչվել:

Առաջարկություն

ՀՀ կառավարությանը՝

1. Իրականացնել ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգի լրամշակում, փոփոխությունները համապատասխանեցնելով ներկայումս գործող ՀՀ կառավարության կառուցվածքին և նրանում ներառել երաշխավորագրերի ժամկետի երակարաձգման դրույթի պայմանները:

2. Մշակել նոր կարգ ՀՀ կառավարության կողմից առանձին որոշումներով տրամադրման ենթակա ետևաբույս և փոխանցելի մուրհակների համար:

ՀՀ ֆինանսների նախարարությանը՝

1. Լիցենզավորման պայմանների և պահանջների նկատմամբ հսկողությունն իրականացնել բացառապես «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2. Անհրաժեշտ է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն, ըստ որի աուդիտորները կկրեն ֆինանսական պատասխանատվություն՝ այդպիսով կրելով իրենց կողմից իրականացրած աուդիտի ռիսկը: Քննարկել օրենքում առաջարկվող փոփոխության իրականացման նպատակահարմարությունը:

3. Շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեության լիցենզավորումը իրականացնել ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի թիվ 1164-Ն որոշմամբ հաստատված կարգին համահունչ: Լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում, խաղային սարքավորումների ծագումնաբանությունը առավել ճշտությամբ որոշելու նպատակով, սարքավորումների ծագման սերտիֆիկատից բացի անհրաժեշտ է ներառել նաև տեխնիկական անձնագրի համարը:

4. Համապատասխան իրավասու մարմինների հետ համատեղ.

- սահմանել պատշաճ հսկողություն շահումով խաղերի և խաղատնային գործունեության կազմակերպիչների կողմից իրականացվող գովազդային վիճակախաղերը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու համար,
- մշակել միջոցառումների ծրագիր ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղված տնտեսվարող սուբյեկտներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու և հետագայում նմանատիպ գործելաոճը բացառելու ուղղությամբ:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) ենթակետի համաձայն, մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկատվություն՝ հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ ԱՆ

15 նոյեմբերի 2012 թվականի N 1634 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 380 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգը հաստատելու մասին» N 380 որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

- 1) կարգի ամբողջ տեքստից հանել «և Էկոնոմիկայի» բառերը.
- 2) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15-րդ կետով.

«15. Երաշխավորագրով նախատեսված պարտավորության մարման ժամկետների փոփոխությունները կարող են կատարվել վարկառու կազմակերպության ֆինանսական վիճակի բարելավման անհրաժեշտության դեպքում, պարտատիրոջ համաձայնության և

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առաջարկության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. դեկտեմբերի 26
Երևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր
МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
М И Н И С Т Р
MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA
M I N I S T E R

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
0010, Ереван, ул. Мелик-Адамяна 1
1 Melik-Adamyana str., Yerevan, 0010
Հեռ./Тел./Phone (+374 10) 59 53 04
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 52 42 82
Էլ. փոստ/Эл. почта/E-mail: minfin@minfin.am
Web page: www.minfin.am

№ _____
Ձեռ № _____

Հայաստանի Հանրապետության
վերահսկիչ պալատի նախագահ
պարոն ԻՇԽԱՆ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ


Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմ

Հարգելի պարոն Զաքարյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի մարտի 22-ի թիվ 02/23.14/3964-12 հանձնարարականի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի մարտի 7-ի թիվ 5/4 որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության՝ գանձապետական համակարգի կողմից իրականացվող խնդիրների օրինական և արդյունավետ կատարման, լիցենզավորման գործակալության աշխատանքների արդյունավետության, լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության աշխատանքների արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն), առաջնորդվելով ՀՀ վարչապետի 2008 թվականի մայիսի 4-ի N 225-Ա որոշմամբ, կից Ձեզ ենք ներկայացնում բացատրություններ և առարկություններ Հաշվետվության ՀՀ ֆինանսների նախարարության լիցենզավորման գործակալության աշխատանքների արդյունավետության ու լիցենզավորման պայմանների և պահանջների

հսկողության տեսչության աշխատանքների արդյունավետության նկատմամբ իրականացված
վերահսկողության արդյունքների վերաբերյալ:

Հարգանքով՝



ՎԱՋԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կատարող՝

հեռախոս՝

լիցենզավորման պայմանների և
պահանջների հսկողության տեսչություն
595-211

Բացատրություններ և առարկություններ

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի մարտի 7-ի թիվ 5/4 որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության՝ գանձապետական համակարգի կողմից իրականացվող խնդիրների օրինական և արդյունավետ կատարման, լիցենզավորման գործակալության աշխատանքների արդյունավետության, լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության աշխատանքների արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության (այսուհետ՝ **Հաշվետվություն**) լիցենզավորման գործակալության աշխատանքների արդյունավետության ու լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության աշխատանքների արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ

1. Հաշվետվության <<Լիցենզավորման և հսկողական գործառնություններ>> բաժնի 2-րդ պարբերության կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալությունը և լիցենզավորման պայմանների ու պահանջների հսկողության տեսչությունը ստեղծվել են ոչ թե ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 268-Ն որոշմամբ, այլ ՀՀ Կառավարության 2010 թվականի օգոստոսի 19-ի թիվ 1146-Ն որոշմամբ:
2. Հաշվետվության <<Լիցենզավորման և հսկողական գործառնություններ>> բաժնի 5-րդ կետի, եզրակացության 6.1, 6.2 և ՀՀ ֆինանսների նախարարությանը վերաբերվող առաջարկության 3-րդ կետերի վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշման շահումով խաղի և խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու հայտին կից հայտատուն ներկայացնում է շահումով խաղերի վերաբերյալ տվյալներ (ձև 4) և այդ խաղային սարքավորումների ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից խաղային սարքավորումների և խաղասեղանների համար տրված ապրանքի ծագման հավաստագիրը: Նշված շահումով խաղերի վերաբերյալ տվյալների ճշտման համար լիցենզավորող մարմնի համար հիմք է հանդիսանում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից խաղային սարքավորումների և խաղասեղանների համար տրված ապրանքի ծագման հավաստագիրը: Այսինքն՝ լիցենզավորող մարմինը ելնելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքից չի կարող անհիմն մերժել տվյալ սարքավորումների վերաբերյալ տեղեկությունները, քանի դեռ չի

ապացուցել, որ նրանք սխալ են: Իսկ, ինչպես նշվեց, լիցենզավորող մարմնի համար այդ տեղեկությունների ճշտման համար հիմք է հանդիսանում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից խաղային սարքավորումների և խաղասեղանների համար տրված ապրանքի ծագման հավաստագրերը: Այն դեպքում, երբ հայտատուն լիցենզավորող մարմին դիմելիս շահումով խաղերի վերաբերյալ տվյալներում (ձև 4) չի նշում որևէ մի տվյալ (խաղային սարքավորման տեսակը, մոդելը կամ համարը), ապա լիցենզավորող մարմինը՝ համեմատելով այդ տվյալները խաղային սարքավորումների և խաղասեղանների ծագման հավաստագրի տվյալների հետ, եզրակացնում է, թե արդյոք հայտատուի կողմից ներկայացված տվյալները ճիշտ են, թե ոչ: Հնարավոր են այնպիսի դեպքեր, երբ խաղային սարքավորումները ըստ ծագման հավաստագրի չունենան կամ տեսակը, կամ մոդելը, ինչը չի խանգարի լիցենզավորման մարմնին նույնականացնել այդ սարքավորումները: Այդ պարագայում լիցենզավորող մարմինը, համեմատելով այդ տվյալները ծագման հավաստագրի հետ և չխաթարելով հայտատուի գործունեությունը, համաձայնություն է տալիս այդ սարքավորումների շահագործմանը՝ հիմք ընդունելով, որ դրանք գրանցված են ՀՀ առևտրաարդյունաբերական պալատում և համապատասխանում են ՀՀ-ում գործող չափանիշներին:

Միաժամանակ նշենք, որ այն տեղեկատվությունը (խաղային սարքավորման տեսակը, մոդելը կամ համարը), որը չի պարունակում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից խաղային սարքավորումների և խաղասեղանների համար տրված ապրանքի ծագման հավաստագիրը, լիցենզավորող մարմինը չի պահանջում, քանի որ <<Շահումով խաղերի և խաղատների մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի <<զ>> կետով սահմանվում է, որ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգում պետք է նշվի իրականացվող շահումով խաղերի տեսակները և քանակը: ՀՀ կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշման նախագիծը, որով հաստատվել է շահումով խաղերի վերաբերյալ տվյալների ձևը (ձև 4), ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, որի սահմանման նպատակն է եղել խաղային սարքավորումների հաշվառումը, այլ ոչ թե խաղերի տեսակների, բնույթի և քանակի մասին տեղեկատվություն ստանալը: Լիցենզավորող մարմնին հայտին կից ներկայացված շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգերից պարզ է, թե ինչ տեսակի և բնույթի խաղ պետք է իրականացնի հայտատուն, ուստի լիազոր մարմինը առաջնորդվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով (**<<Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին**

արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են>>), ձևական պահանջի պահպանման նպատակով չի ծանրաբեռնել հայտատուին և չի մերժել համապատասխան լիցենզիայի տրամադրումը:

Ինչ վերաբերվում է առանց համարի խաղային սարքավորումների համարակալմանը, ապա ըստ ՀՀ կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեության լիցենզավորման>> կարգի 8-րդ կետի, խաղային սարքավորումների համարակալման պարտավորությունը դրված է կարգավորող լիազոր մարմնի վրա, իսկ հայտը ներկայացնելու և քննարկելու ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտատուի համար հանդես է գալիս ոչ, թե կարգավորող լիազոր մարմին, այլ դեռևս լիցենզավորող պետական կառավարման մարմին (ՀՀ կառավարության 24.09.2001թ. թիվ 895 որոշում), քանի որ տվյալ հայտը կարող է չբավարարվել և ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտատուի համար երբևէ չդառնալ կարգավորող լիազոր մարմին: Լիցենզիան տրամադրվելուց հետո նոր ՀՀ ֆինանսների նախարարությունը կազմակերպչի համար դառնում է կարգավորող լիազոր մարմին և համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները՝ համաձայն ՀՀ կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեության լիցենզավորման>> կարգի 8-րդ կետի, իրականացնում են առանց համարների խաղային սարքավորումների համարակալում՝ կատարելով համապատասխան նշումները, թե խաղային սարքավորման, թե լիցենզավորված անձի անձնական գործերում, ինչը հստակ երևում է ստուգման ընթացքում ստուգող խմբի կողմից ուսումնասիրված փաստաթղթերից:

Ընդ որում, հարկ է նշել, որ ըստ ՀՀ կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեության լիցենզավորման>> կարգի շահումով խաղերի վերաբերյալ տվյալները (ձև 4), շահումով խաղի և խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու հայտին կից ներկայացվող բազմաթիվ փաստաթղթերից մեկն է և նշված փաստաթղթում խաղային սարքավորումների և խաղասեղանների մոդելը, տեսակը, համարը չնշելը անհիմն է որակել որպես <<շահումով խաղի և խաղատան

գործունեության լիցենզավորումը լիազոր մարմնի կողմից հիմնականում իրականացվել է ՀՀ կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշմամբ հաստատված լիցենզավորման կարգի խախտմամբ>>:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 2008թ-ին իրականացված վերահսկողության ժամանակ (2006-2008թթ.) ուսումնասիրվել են շահումով խաղերի և խաղատների այդ ժամանակահատվածի կազմակերպիչների բոլոր գործերը, որոնցում ներառված շահումով խաղերի վերաբերյալ տվյալները (ձև 4) եղել են նույնը, ինչ որ ներկայումս, ինչի կապակցությամբ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից որևէ առաջարկություն կամ դիտողություն չի եղել, որի պարագայում կարող էր կանխվել 2009-2011թթ. ընթացքում նույն կերպ տվյալների ներկայացումը (եթե այդ դիտողությունը համարվեր հիմնավոր):

Ամփոփելով վերը շարադրվածը, հայտնում ենք, որ շահումով խաղերի և խաղատան գործունեության լիցենզավորումը լիազոր մարմնի կողմից ամբողջությամբ իրականացվել է ՀՀ կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեության լիցենզավորման>> կարգին համապատասխան:

Նշենք, որ խաղային սարքավորումների սերտիֆիկացումը չի համարվում ՀՀ ֆինանսների նախարարության գործառույթ, դեռ ավելին՝ ՀՀ օրենսդրությամբ խաղատների և շահումով խաղերի կազմակերպիչների կողմից շահագործման ենթակա խաղային սարքավորումների ծրագրային ապահովման սերտիֆիկացման պահանջ նախատեսված չէ:

Միաժամանակ գտնում ենք, որ շահումով խաղի և խաղատան լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում խաղային սարքավորումների տեխնիկական անձնագրի համարը նշելը լրացուցիչ հնարավորություն չի ընձեռնի խաղային սարքավորումների ծագումնաբանությունը առավել ճիշտ որոշելու համար:

3. Հաշվետվության <<Լիցենզավորման և հսկողական գործառույթներ>> բաժնի 6-րդ կետի 1-ին և 2-րդ պարբերությունների, եզրակացության 7.1 և ՀՀ ֆինանսների նախարարությանը վերաբերվող առաջարկության 1-ին կետերի վերաբերյալ

Ինչպես իրավացիորեն նշվել է Հաշվետվության մեջ, ոիսկի վրա հիմնված ստուգումների իրականացման պահանջը ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման

մասին>> ՀՀ օրենքով նախատեսվել է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի (2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-243-Ն) ընդունմամբ, որն ուժի մեջ է մտել 2011 թվականի օգոստոսի 6-ին: Նշված օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ օրենքը գործում է այն մարմինների համար, որոնք օրենքով սահմանված կարգով հաստատում և ներդնում են ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով մշակում, հաստատում և հրապարակում են իրենց հսկողության ոլորտի ստուգաթերթերը:

Այդ իսկ կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 22.12.2011թ. թիվ 1852-Ն որոշմամբ, իսկ Տեսչության կողմից իրականացվող վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման պայմանների ու պահանջների կատարման ստուգաթերթերը՝ 12.01.2012թ. թիվ 18-Ն որոշմամբ: Ուստի Տեսչության կողմից 2009-2011թթ. ընթացքում իրականացված ստուգումները չէին կարող անցկացվել ռիսկի վրա հիմնված: Նման ստուգումները կարող են իրականացվել 2012թ-ից սկսած, այն էլ այդ տարվա ընթացքում իրականացված ստուգումների հիման վրա որոշված ռիսկայնության չափանիշները հաշվի առնելով:

Հարկ ենք համարում նշել, որ ներկայումս գործող <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի համաձայն տնտեսվարող սուբյեկտները ըստ ռիսկայնության աստիճանների պետք է դասակարգվեն ստուգումների անցկացման հաճախականությունը որոշելու նպատակով, այնինչ նույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1 կետի 7-րդ ենթակետով սահմանվում է, որ այդ սահմանափակումները չեն տարածվում վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների մոտ իրականացվող այդ ոլորտների ստուգումների վրա: Այսինքն, անկախ ռիսկայնության աստիճանից, <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց (2011 թվականի օգոստոսի 6-ից) հետո ևս նշված ոլորտներում կարող են

ստուգումներ իրականացվել առանց այդ օրենքով նախատեսված ռիսկայնության աստիճանների որոշման և դրանով պայմանավորված ստուգումների անցկացման հաճախականության սահմանափակումների պահպանման:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ 2009-2011թթ. ընթացքում ռիսկայնությունը որոշող չափանիշներ չեն եղել, քանի որ դրանք <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի պահանջ չի եղել, իսկ երբ որ այն դարձել է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի պահանջ, ինչպես վերը նշվեց, այդպիսի չափանիշներ հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և 2012 թվականի հունվարի 1-ից հաշվարկվում և գնահատվում է տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնությունը: Ուստի, Հաշվետվության <<Առաջարկություն>> բաժնի ՀՀ ֆինանսների նախարարությանը վերաբերվող 1-ին կետի հետ կապված հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լրացուցիչ գործողություններ անելու անհրաժեշտությունը բացակայում է:

4. Հաշվետվության <<Լիցենզավորման և հսկողական գործառնություններ>> բաժնի 6-րդ կետի 3-րդ պարբերության և եզրակացության 7.2 կետի 1-ին պարբերության վերաբերյալ

Համաձայն <<Շահումով խաղերի և խաղատների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<է>> կետի՝ <<Տուգանքը՝ որպես պատասխանատվության միջոց, կիրառվում է, եթե կազմակերպիչը խախտել է սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետի պահանջը՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ հինգ հարյուր հազար դրամ>>: Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետի պահանջը հետևյալն է՝ <<Կազմակերպիչը շահումով խաղերը կազմակերպում և անցկացնում է իր կողմից սահմանած և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին (այսուհետ՝ Կանոնակարգ) համապատասխան>>: Համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

<<Կանոնակարգում պետք է նշվեն՝

ա) հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը.

բ) հայտատուի գտնվելու և գործունեության իրականացման վայրերը.

գ) իրականացվող շահումով խաղերի տեսակները (մեքենայացված և/կամ կենդանի) և քանակը.

դ) շահումով խաղի մեկ տոմսի և (կամ) խաղանիշի (ժետոնի) և (կամ) միավորի գինը.

ե) խաղի անցկացման կարգը.

զ) շահումի տարբերակները.

է) շահումները վճարելու վայրը.

ը) խաղացողների իրավունքներն ու պարտականությունները.

թ) կազմակերպչի իրավունքներն ու պարտականությունները>>:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<է>> կետով սահմանված <<խախտման յուրաքանչյուր դեպք>> արտահայտությունը, դրույթի կիրառման ժամանակ, հնարավոր է մեկնաբանել տարբեր կերպ: Այն է. յուրաքանչյուր դեպք կարելի է դիտել Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>>-ից <<թ>> ենթակետերով Կանոնակարգի նկատմամբ սահմանված յուրաքանչյուր պահանջի խախտումը կամ Կանոնակարգի նկատմամբ սահմանված պահանջների յուրաքանչյուր խախտումը, անկախ պահանջը նույնը լինելու փաստից: Այսինքն, նշված դրույթի կիրառման ժամանակ կարելի է ընտրել երկու հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ <<Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը>>: Այս ձևակերպումից հետևում է, որ հայեցողական լիազորությունը վարչական մարմնի կողմից մեկ հարցի մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրականացնելու մեջ է, իսկ այդ ընտրությունը վարչական մարմնի իրավունքն է, այսինքն՝ կախված օրենքի կարգավորումից և կոնկրետ իրավիճակից, դա կարող է նշանակել նաև վարչական մարմնի գործելու կամ չգործելու, որոշում ընդունելու կամ ընդհանրապես որևէ որոշում ընդունելուց ձեռնպահ մնալու հայեցողություն:

Նշված դրույթի հիման վրա էլ, ՀՀ ֆինանսների նախարարությունը մինչև 2011 թվականի հունիս ամիսը ընտրել է վերը նշված երկու իրավաչափ լուծումներից առաջինը՝ հաշվի առնելով նաև <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը, որի համաձայն վարչարարությունը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի՝ <<Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում>>:

ՀՀ ֆինանսների նախարարությունն իր հայեցողական լիազորությունն իսկզբանե միանման դեպքերում իրականացրել է վերը նշված նույն ձևով՝ ընդհուպ մինչև 2011 թվականի հունիս ամիսը: 2011 թվականի հունիս ամսից այդ սահմանափակումից հրաժարվել է՝ հաշվի առնելով նմանատիպ դեպքերի քանակը՝ գերակա շահ համարելով շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեություն իրականացնողների նկատմամբ հնարավորինս կոշտ քաղաքականությունը և փողերի լվացման հնարավոր դեպքերի կանխարգելումը:

Իսկ ինչ վերաբերվում է Հաշվետվության մեջ նշված ՀՀ վարչական դատարանի 2012 թվականի փետրվարի 2-ի ՎԴ/3299/05/11 վճռին, որով վճռվել է <<Ումառ>> ՍՊԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության 1.500.000 ՀՀ դրամ բռնագանձել, հայտնում ենք, որ վճիռը դեռ օրինական ուժի մեջ չի մտել, քանի որ <<Ումառ>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան վերաքննիչ բողոք է ներկայացվել և հնարավոր է, որ վճիռը բեկանվի: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչությունը ՀՀ օրենսդրության շրջանակներում անում է ամեն ինչ, որպեսզի ՀՀ վարչական դատարանի 2012 թվականի փետրվարի 2-ի վճիռը մնա ուժի մեջ:

Ավելին, ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 2008թ.-ին իրականացված նախորդ վերահսկողության ժամանակ (2006-2008թթ.) ուսումնասիրվել ու քննարկվել է նշված հարցը (այդ ժամանակահատվածում ևս կիրառվել է վերը նշված տարբերակներից առաջինը), ինչի կապակցությամբ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից որևէ առաջարկություն կամ դիտողություն չի եղել:

Ուստի, ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության վերը նշված գործողությունները չեն հանդիսանում ՀՀ օրենսդրության պահանջի խախտում և դրանք իրականացվել են ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում:

5. Հաշվետվության <<Լիցենզավորման և հսկողական գործառույթներ>> բաժնի 6-րդ կետի 4-րդ պարբերության և եզրակացության 7.2 կետի 2-րդ պարբերության վերաբերյալ

<<Հաստատագրված վճարների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վճարողները մինչև նույն օրենքով նախատեսված ոլորտներում գործունեություն իրականացնելը (սկսելը) իրենց գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային տեսչության մարմին են ներկայացնում ՀՀ հարկային տեսչության կողմից սահմանված ձևի տեղեկություն՝ երկու օրինակից՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ:

Այդ իսկ կապակցությամբ հայտնում ենք, որ Հաշվետվության <<Լիցենզավորման և հսկողական գործառույթներ>> բաժնի 6-րդ կետի 4-րդ պարբերության մեջ նշված բոլոր դեպքերում դրանում նշված ընկերությունները մինչև գործունեություն սկսելը վերը նշված դրույթին համապատասխան ելակետային տվյալները ներկայացրել են հարկային տեսչություն, որից հետո նույն ամսվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացրել կանոնակարգերի համապատասխան փոփոխություններ, որոնք հաստատվելուց հետո նոր իրականացրել են ելակետային տվյալներով ներկայացված տվյալներին համապատասխան գործունեություն: Այսպես.

- «Ինթեր Սլոտ» ՓԲԸ 28.12.2009թ. ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցրել է շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգ՝ ըստ որի ընկերությունը կարող էր շահագործել 64 մեքենայացված և 10 կենդանի խաղ: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից «Ինթեր Սլոտ» ՓԲԸ-ի ղեկավարներ ամսվա ելակետային տվյալները ՀՀ ֆինանսների նախարարություն չեն ներկայացվել, որի պատճառով նախարարության աշխատակիցները չէին էլ կարող տեղեկանալ հնարավոր անհամապատասխանության մասին և ձեռնարկել համապատասխան միջոցներ (ստուգմամբ փաստել ավել ապարատների շահագործումը և կիրառել համապատասխան պատասխանատվության միջոց):
- «Տեմպ Մեթ» ՍՊԸ-ն 17.02.2011թ-ին ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել շահումով խաղերի կազմակերպման և անցկացման վերախմբագրված կանոնակարգ, որով նախատեսվել է 7 հատ խաղասեղանը փոխարինել 10-ով, որին 02.03.2011թ. կայացած լիցենզավորման հանձնաժողովը համաձայնություն է տվել վերապահումով և 04.03.2011թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համաձայնություն է տրվել այդ

կանոնակարգին: Ավելին, հարկ ենք համարում նշել, որ Տեսչությունը այդ ժամանակ գտնվել է ձևավորման փուլում և աշխատողներ չի ունեցել՝ առաջին չորս աշխատակիցները ընդունվել են աշխատանքի 2011 թվականի փետրվարի 17-ին և 18-ին:

Վերը նշվածից հետևում է, որ հնարավոր չէ պնդել, որ այդ ընկերությունները շահագործել են կանոնակարգերով նախատեսված ապարատների կամ կենդանի խաղերի քանակից ավել ապարատներ կամ կենդանի խաղեր, քանի որ այդ փաստը որևէ կերպ արձանագրված չէ:

Միաժամանակ, <<Լիցենզավորման և հսկողական գործառնություններ>> բաժնի 6-րդ կետի 4-րդ պարբերության 2-րդ մասի 3-րդ նախադասությունից մինչև այդ պարբերության ավարտը շարադրված մտքերի կապակցությամբ հայտնում ենք, որ պարզ չէ, թե դրանք վերը նշված պարբերությունների հետ ինչ առնչություն ունեն և դրանով ՀՀ վերահսկիչ պալատը ինչ խախտում է փաստել, թե դրանք պարզապես կրում են դեկլարատիվ բնույթ: Մինչդեռ, <<Վերահսկիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն Հաշվետվությունն ըստ անհրաժեշտության կարող է ներառել գրառումներ՝ խախտումների վերաբերյալ: Այս պարագայում անտեղի ենք համարում Հաշվետվությունում շարադրված այդ մտքերը:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունն իր պարտականությունները թերի չի կատարել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված ռիսկերը հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ ավելի շատ ուշադրություն կդարձնի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված ելակետային տվյալների ու շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգերի տվյալների համադրման աշխատանքների իրականացմանը:

6. Հաշվետվության <<Լիցենզավորման և հսկողական գործառնություններ>> բաժնի 7-րդ և 8-րդ կետերի, եզրակացության 8-րդ և 9-րդ կետերի ու ՀՀ ֆինանսների նախարարությանը վերաբերվող առաջարկության 4-րդ կետի վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 252-Ա հրամանով 28.12.2009թ. <<Ումառ>> ՍՊԸ տրված ՇԽ-218 լիցենզիայի գործունեության իրականացման վայրը փոփոխվել է՝ դառնալով՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պոռոշյան, Գ.Չաուշի 1 փողոց N 12, մառան 120.6 ք.մ.: Այսինքն, ՇԽ-146 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելուց հետո, <<Ումառ>> ՍՊԸ-ն ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պոռոշյան, Գ.Չաուշի 1 փողոց N 12, մառան 120.6 ք.մ. հասցեում

գործունեություն է իրականացրել է ՇԽ-218 լիցենզիայի հիման վրա, որի կապակցությամբ էլ նույն վայրով ներկայացվել են ելակետային տվյալներ:

Նշված եզրահանգման հիմք կարող էր հանդիսանալ այն, որ ընկերությունը, հնարավոր է, տեխնիկական վրիպակի հետևանքով ներկայացված ելակետային տվյալներում շարունակել է նշել ՇԽ-146 լիցենզիայի տվյալները, ինչը սակայն չի կարող հիմք հանդիսանալ ընկերության կողմից իրականացված գործունեությունը ապօրինի որակելու համար, քանի որ ընկերությունը, ինչպես արդեն նշվեց, այդ վայրում գործունեություն իրականացնելու համար ունեցել է ՇԽ-218 լիցենզիան:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հաշվետվության մեջ նշված ելակետային տվյալներից 29.03.2010թ.ին ներկայացվածը կարող էր ներկայացվել ՇԽ-146 լիցենզիայի տվյալներով, քանի որ այդ պահին դեռևս այդ լիցենզիան ուժը կորցրած չի եղել (ուժը կորցրել է ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2010թ. թիվ 246-Ա հրամանով, ինչի մասին նշված է նաև Հաշվետվության մեջ): Իսկ ինչ վերաբերվում է ընկերության կողմից 22.06.2010թ.-ին ներկայացված ելակետային տվյալներին, ապա հայտնում ենք, որ դրանք հարկային մարմինների կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն չեն ներկայացվել: Ուստի ՀՀ ֆինանսների նախարարությունը այս պարագայում որևէ գործողություն չէր էլ կարող անել:

Հարկ ենք համարում նշել նաև, որ առանց լիցենզիայի գործունեության իրականացման մասով հսկողություն իրականացնելը (այդ թվում` **Հաշվետվության 8-րդ կետում** նշված փաստը) չի հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարության իրավասությունը: Համաձայն <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի այն հարկային մարմինների վերահսկողության ոլորտ է: Ուստի Հաշվետվության <<Գովազդային վիճակախաղերի կազմակերպման վերաբերյալ>> բաժնում նշված տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերված խախտումները նույնպես չեն առնչվում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հսկողության ենթակա ոլորտներին, դրանք հարկային մարմինների կողմից հսկողության ենթակա ոլորտներ են: Հետևաբար, հիմք ընդունելով <<Վերահսկիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասը, հայտնում ենք, որ այդ խախտումները չպետք է արձանագրվեն ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմում իրականացված ստուգումների արդյունքում, որպես նախարարության կողմից թույլ տրված խախտումներ կամ բացթողումներ:

Իսկ ինչ վերաբերվում է <<Առաջարկություն>> բաժնի ՀՀ ֆինանսերի նախարարությանը վերաբերվող 4-րդ կետին, ապա տեղեկացնում ենք, որ դրա հետ կապված լրացուցիչ գործողություն իրականացնելու անհրաժեշտությունը վերանում է, քանի որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1759-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը առանց համապատասխան լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքեր հայտնաբերելիս ՀՀ ֆինանսերի նախարարությունը կտեղեկացնի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեին:

7. **Հաշվետվության 9-րդ կետի 3-րդ պարբերությունում նշված** է, որ <<Ներկայումս գործող օրենսդրության համաձայն, եթե առկա են բավարար հիմքեր աուդիտորական կազմակերպությունների կողմից իրականացված աուդիտի եզրակացությունը ոչ հավաստի համարելու համար, ապա այդ դեպքում տվյալ աուդիտորական եզրակացության լիցենզիան և աուդիտն իրականացրած աուդիտորի որակավորման վկայականը ճանաչվում են ուժը կորցրած, սակայն մատուցած ծառայության արդյունքում պատվիրատուին պատճառված վնասները չեն հատուցվում>>:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ <<Աուդիտորական գործունեության մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 2-րդ մասի <<ա>> կետի համաձայն, աուդիտ իրականացնող անձը պարտավոր է աուդիտորական գործունեության իրականացման ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Միաժամանակ, Օրենքի պահանջները խախտելու համար աուդիտ իրականացնող անձի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները սահմանվում են Օրենքի 7-րդ գլխով, ինչպես նաև Օրենքի 24.1-րդ, 27-րդ և 28-րդ հոդվածներով: Ինչ վերաբերում է աուդիտորի և պատվիրատուի միջև կնքված աուդիտորական ծառայությունների իրականացման պայմանագրի արդյունքում աուդիտոր կողմից տրված աուդիտորական եզրակացությունը ոչ հավաստի ճանաչվելու և դրանից բխող՝ պատվիրատուին պատճառված վնասների հատուցմանը, ապա հայտնում ենք, որ աուդիտորի և պատվիրատուի միջև կնքված աուդիտորական ծառայությունների իրականացման պայմանագիրը հանդիսանում է քաղաքացիաիրավական պայմանագիր, որից բխող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք): Օրենսգրքի 39-րդ գլուխը սահմանում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հետ կապված հարաբերությունների կարգավորումը:

Փաստորեն, աուդիտորի և պատվիրատուի միջև աուդիտորական ծառայությունների իրականացման պայմանագրի կնքմամբ կողմերը միմյանց նկատմամբ կրում են պայմանագրային պարտավորություն և այն դեպքում, երբ պատվիրատուն աուդիտորին վճարում է մատուցած ծառայության դիմաց, սակայն աուդիտորի կողմից մատուցած ծառայության արդյունքում տրված աուդիտորական եզրակացությունը ճանաչվում է ոչ հավաստի և որով վնաս է պատճառվում պատվիրատուին, ապա տվյալ դեպքում պատվիրատուն օրենքով սահմանված կարգով կարող է աուդիտորից պահանջել վնասի հատուցում: Ավելին, այն դեպքում երբ աուդիտորի կողմից մատուցած աուդիտորական ծառայության արդյունքում վնաս է պատճառվել պետությանը, ապա պետությունը ևս ունի վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք:

8. **Հաշվետվության 9-րդ կետի 5-րդ պարբերությունում նշված է**, որ <<...շահումով խաղերի և խաղատնային գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված աուդիտի արդյունքները չեն արտացոլում այդ բնագավառում առկա ռիսկերը: Աուդիտի առանցքը պետք է կազմեին էական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված ընդհանուր մեծության նվազագույն չափի՝ 86%-ի ապահովման, հասույթի իրական ծավալների գանահատման, կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի արժանահավատության հարցերը: Մինչդեռ նշված հարցերը դուրս են մնացել ուշադրության շրջանակներից>>:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ նշված նկատառումները ևս վերաբերում են աուդիտի որակի հսկողությանը, որը հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչության (որն ընդգրկված չի եղել ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման շրջանակներում) գործառույթ և չի առնչվում լիցենզավորման գործակալության և լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության գործառույթներին: Այդուհանդերձ, հայտնում ենք, որ խաղատնային գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված՝ ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված ընդհանուր մեծության նվազագույն չափը՝ 86%-ը հանդիսանում է ընդամենը ծրագրավորված թիվ, որը սակայն կարող է իրականում ստացվել նշվածից ավելի կամ պակաս չափով: Հայտնում ենք նաև, որ որևէ կազմակերպության աուդիտ

անցկացնելիս աուդիտորն իրականացնում է տվյալ պատվիրատուի նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների ստուգում և տալիս համապատասխան եզրակացություն՝ դրանցում պարունակվող տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ և եթե հետագայում (աուդիտի անցկացումից հետո) աուդիտի ենթարկված կազմակերպությունները սնանկ ճանաչվելով ձեռք են բերում պետության հանդեպ պարտավորություններ, ապա այդ հանգամանքը չի կարող վերաբերել աուդիտի անցկացման ժամանակահատվածին, քանի որ այդ պարտավորության ձեռքբերման ժամանակահատվածը հաջորդում է աուդիտի անցկացման ժամանակահատվածին:

Միաժամանակ հայտնում ենք, որ խաղատնային գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ աուդիտ իրականացրած կազմակերպություններում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացրած ստուգումների արդյունքում հայտնաբերվել են օրենսդրության մի շարք խախտումներ, մասնավորապես, աուդիտի արդյունքում տրված որոշ աուդիտորական եզրակացությունները ճանաչվել են ոչ հավաստի (նախկինում՝ կեղծ) և դրանց հիման վրա խախտումներ թույլ տված աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ կիրառվել են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ (օրինակ, <<Սաթեն Աուդիտ>> ՍՊԸ-ի, <<Էկոնոմիկս Աուդիտ>> ՍՊԸ-ի, ԱԶ Տիգրան Սահակյանի, <<Գոլդեն Այ Աուդիտ>> ՍՊԸ-ի նկատմամբ կիրառվել է լիցենզիայի գործողության դադարեցում, ինչպես նաև խախտում թույլ տված աուդիտորի աուդիտորական որոկավորումից զրկում):³

9. Հաշվետվության <<Եզրակացություն>> բաժնի 10-րդ կետում նշված է, որ <<2008-2010թթ. խաղատնային գործունեություն իրականացրած տնտեսվարող սուբյեկտների տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կազմակերպությունների բոլոր (թվով 243) եզրակացությունները դրական են և կրում են ձևական բնույթ: Կարճ ժամանակ անց որոշ տնտեսվարողներ, պետության հանդեպ ունեցած պարտավորությունների հիմքով, դատարանի վճիռներով սնանկ են ճանաչվել>>:


Այս առնչությամբ ևս հայտնում ենք, որ ներկայացված տեղեկատվությունը համարում ենք ապակոդորոշող՝ հետևյալ հիմնավորմամբ, որ աուդիտորն իրականացնում է պատվիրատուի նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների ստուգում և եթե աուդիտի անցկացումից հետո աուդիտի ենթարկված կազմակերպությունը ձեռք է բերում պետության հանդեպ պարտավորություններ, ապա այդ ռիսկի գնահատումը չի վերաբերում անցկացրած աուդիտի ժամանակահատվածին,

ինչն էլ չի կարող ազդել աուդիտի արդյունքների վրա: Իսկ ինչ վերաբերում է աուդիտի արդյունքում աուդիտորի կողմից հասցրած վնասի հատուցմանը, ապա վնաս կրողը, հանդիսանալով աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի կողմ, կարող է օրենքով սահմանված կարգով մյուս կողմից՝ աուդիտորից պահանջել վնասի հատուցում:

10. Հաշվետվության ՀՀ ֆինանսերի նախարարությանը վերաբերվող <<Առաջարկություն>> քաժնի 2-րդ կետում նշված է, որ <<անհրաժեշտ է <<Աուդիտորական գործունեության մասին>> ՀՀ օրենքում կատարել փոփոխություն, ըստ որի աուդիտորները կկրեն ֆինանսական պատասխանատվություն՝ այդպիսով կրելով իրենց կողմից իրականացված աուդիտի ռիսկը>>:

Այս առնչությամբ հայտնում ենք, որ ներկայացված առաջարկությունը չի վերաբերում ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության և լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության գործառույթներին:

Միաժամանակ հայտնում ենք, որ աուդիտորի և պատվիրատուի միջև կնքված աուդիտորական ծառայությունների իրականացման պայմանագիրը հանդիսանում է քաղաքացիաիրավական պայմանագիր, որից բխող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ. (+374 10) 59 53 04

Ֆաքս (+374 10) 52 42 82

Էլ. փոստ: minfin@minfin.am

Վեբ կայք: www.minfin.am

№ _____

Ձեռ № _____

Հայաստանի Հանրապետության

կառավարության աշխատակազմի ղեկավար՝

պարոն Դավիթ Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի հունվարի 23-ի թիվ 02/23.16/795-13 հանձնարարականի՝ հայտնում ենք հետևյալը.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մասով ՀՀ էլեկտրոնային կառավարման www.e-gov.am կայքում տեղադրված է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի մարտի 7-ի թիվ 5/4 որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության (այսուհետ՝ Տեսչություն), ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) և ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի աշխատանքների արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն):

Հաշվետվության լիցենզավորման և հսկողական գործառույթների բաժնի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերի, եզրակացության 7.1, 7.2, 8, 9 կետերի ու առաջարկության 1-ին և 4-րդ կետերի և 5-րդ կետի, եզրակացության 6.1, 6.2 կետերի ու առաջարկության 3-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ դեռևս 2012 թվականի ապրիլի 28-ի թիվ 1/20.1/5785-12 գրությամբ ՀՀ վերահսկիչ պալատին և ՀՀ կառավարության աշխատակազմին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել են բացատրություններ ու առարկություններ, որոնք ՀՀ վարչապետի 2012 թվականի մայիսի 30-ի թիվ 02/23.14/7714-12 հանձնարարականով

ընդունվել են ի գիտություն, որի արդյունքում այդ մասով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտություն չի եղել:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել և ՀՀ ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել <<Շահումով խաղերի և խաղատների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունման դեպքում հնարավորություն կնձեռնվի սահմանել տեխնիկական պահանջներ խաղային սարքավորումների մասով:


Հաշվետվության ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգին վերաբերվող եզրակացության 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի և ՀՀ կառավարությանն առնչվող առաջարկությունների վերաբերյալ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 30.10.2012թ-ին հաստատված <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի <<Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների թողարկման գործընթացը կանոնակարգելու մասին>> N 827-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու և <<Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների թողարկման գործընթացը կանոնակարգելու մասին>> N 928-Ա և <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հասարակ մուրհակների թողարկման գործընթացը կանոնակարգելու մասին>> N 814-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հասարակ մուրհակների թողարկման գործընթացը կանոնակարգելու մասին>> N 929-Ա հրամաններով կարգավորվել է ՀՀ կառավարության կողմից առանձին որոշումներով տրամադրման ենթակա հասարակ և փոխանցելի մուրհակների գծով նոր կարգի մշակման գործընթացը, իսկ ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգի լրամշակման, փոփոխությունները ներկայումս գործող ՀՀ կառավարության կառուցվածքին համապատասխանեցնելու և նրանում երաշխավորագրերի ժամկետի երկարաձգման դրույթի ներառման մասին առաջարկության գծով (եզրակացության 3-րդ կետ) հարցը կարգավորվել է ՀՀ կառավարության 15.11.2012թ. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 18-ի N 380

որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> N 1634-Ն որոշման ընդունմամբ:

Ինչ վերաբերվում է Հաշվետվության եզրակացության 4-րդ և 5-րդ կետերին՝ հայտնում ենք, որ նոր ուղենշային պարտատոմսերի թողարկումից հետո նախկին պարտատոմսերի տեղաբաշխման հնարավորությունն օրենսդրությամբ չի արգելվում: Երբ պարտատոմսը դադարում է ուղենշային լինելուց, թողարկողն իրավասու է շարունակել դրա տեղաբաշխումները՝ ելնելով շուկայում ձևավորված միտումներից:

Հաշվետվության եզրակացությամբ արձանագրվել է, որ դեռևս հաստատված չեն ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների ընտրության չափանիշները: Տեղեկացնում ենք, որ պետական պարտատոմսերի շուկայի բարեփոխումների ծրագրի շրջանակում կազմվել է ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների ընտրության և գնահատման չափանիշների նախագիծը, որը ներկայումս քննարկվում է ՀՀ կենտրոնական բանկի և պետական պարտատոմսերի շուկայի մասնակիցների հետ:

Հարգանքով՝



Վաչե Գաբրիելյան